

Ձ Ե Կ ՈՒ Յ Ց

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ
(ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ) ՇՐՋԱՆՈՒՄ
2020 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ



ԵՐԵՎԱՆ - 2020

«ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ»

ՀԱՐՑԱԹԵՐԹԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Հարցաթերթի սատարյունի բավարարվածության հետազոտության

1. Սեռը

1. Գեղեցկության փնտրողները սպասում են 12 ամիսից քիչ քանակում:

2. Գեղեցկության փնտրողները սպասում են 12 ամիսից ավել քանակում:

2. Գործընկեր

1. Առանց օգտագործողի

2. Օգտագործող

3. Գեղեցկության փնտրողները սպասում են 12 ամիսից քիչ քանակում:

3. Գեղեցկության փնտրողները սպասում են 12 ամիսից ավել քանակում:

3. Գեղեցկության փնտրողները սպասում են 12 ամիսից քիչ քանակում:

4. Գեղեցկության փնտրողները սպասում են 12 ամիսից քիչ քանակում:

5. Գեղեցկության փնտրողները սպասում են 12 ամիսից քիչ քանակում:

6. Գեղեցկության փնտրողները սպասում են 12 ամիսից քիչ քանակում:

7. Գեղեցկության փնտրողները սպասում են 12 ամիսից քիչ քանակում:

8. Գեղեցկության փնտրողները սպասում են 12 ամիսից քիչ քանակում:

9. Գեղեցկության փնտրողները սպասում են 12 ամիսից քիչ քանակում:

10. Գեղեցկության փնտրողները սպասում են 12 ամիսից քիչ քանակում:

«ՀՀ վիճակագրական կոմիտեն (Արմստատ) 2020թ. հուլիսի 15-ից մինչև 24-ը ներառյալ վիճակագրական տեղեկատվություն սպառողների (օգտագործողների) շրջանում իրականացրել է հետազոտություն՝ «Սպառողների բավարարվածության հետազոտության» հարցաթերթի (այսուհետ՝ Հարցաթերթ) լրացման եղանակով:

Հարցաթերթն էլեկտրոնային փոստով ուղարկվել է 275 վիճակագրական տեղեկատվություն սպառողի (օգտագործողի) և արդյունքում նրանցից ստացվել է 251 լրացված հարցաթերթ:

Արմստատի մարզային (նաև Երևան քաղաքի) վարչությունների կողմից Հարցաթերթի լրացմանը ներգրավվել է 217 օգտագործող և նրանց կողմից լրացվել է 168 Հարցաթերթ:

Արդյունքում, հետազոտությանը ներգրավվածների ընդհանուր թվաքանակը կազմել է 492 մասնակից, որոնցից Հարցաթերթը լրացվել է 419-ի կողմից, այլ կերպ ասած՝ ներգրավվածների 85.2%-ը:

Հարցաթերթում ընդգրկված է 10 հարց և մեկ առանձին կետ (11-րդ կետը)՝ նախատեսված վիճակագրական տեղեկատվություն սպառողի (օգտագործողի) լրացուցիչ մեկնաբանությունների համար:

Հետազոտության ամփոփիչ արդյունքներն ըստ Հարցաթերթի, ներկայացվում են ստորև՝ ըստ առանձին 10 հարցերի.


«1.Վիճակագրական տեղեկատվության սպառողների ո՞ր խմբին եք պատկանում»

Առաջին հարցն ունի 10 ենթակետ, համաձայն որի վիճակագրական տեղեկատվություն սպառողները (օգտագործողները) բաժանված են 10 խմբի (պետական կառավարման մարմիններ, ֆինանսական կազմակերպություններ, գործարար համայնք, արհմիություններ, լրատվամիջոցներ, քաղաքացիական հանրություն (հասարակական կազմակերպություններ, անհատներ), հետազոտական հաստատություններ, գիտակրթական հաստատություններ, միջազգային կազմակերպություններ, այլ):

Ըստ ամփոփման, լրացնողներից 314-ը կամ 74.9%-ը պետական կառավարման և ֆինանսական կազմակերպությունների ներկայացուցիչներն են, 34-ը կամ 8.1%-ը՝ գործարար համայնքի, արհմիությունների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներն են, 63-ը կամ 15.1%-ը՝ գիտակրթական և հետազոտական կազմակերպությունների ներկայացուցիչներն են, 8-ը կամ 1.9%-ը՝ այլ ներկայացուցիչներ: Հարկ է նշել, որ լրատվամիջոցների կողմից Հարցաթերթ չի լրացվել:

Վիճակագրական տեղեկատվություն սպառողների (օգտագործողների) խմբերը

(%)




- 1) Պետական կառավարման և ֆինանսական կազմակերպությունների ներկայացուցիչներ
- 2) Գործարար համայնքի, արհմիությունների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ
- 3) Գիտակրթական և հետազոտական կազմակերպությունների ներկայացուցիչներ
- 4) Այլ

2. Ինչպիսի՞ պաշտոնական վիճակագրություն եք Դուք օգտագործում

Այս հարցն ունի 9 ենթակետ: Դրանք են. «Էկոնոմիկա և ֆինանսներ», «բնակչություն և սոցիալական գործընթացներ», «արդյունաբերություն, շինարարություն, առևտուր և ծառայություններ», «տրանսպորտ և զբոսաշրջություն», «արտաքին առևտուր», «գյուղատնտեսություն, անտառաբուծություն և ձկնաբուծություն», «պարենային ապահովություն», «շրջակա միջավայր և էներգետիկա» և «այլ»: Հարկ է նշել, որ սույն հարցը լրացնելիս վիճակագրական տեղեկատվություն սպառողը (օգտագործողը) կարող է մեկից ավելի նշում կատարել:

Վիճակագրական տեղեկատվություն սպառողի (օգտագործողի) կողմից պաշտոնական վիճակագրության նախընտրելի ոլորտները

(%)




- (1) Էկոնոմիկա և ֆինանսներ
- (2) բնակչություն և սոցիալական գործընթացներ
- (3) արդյունաբերություն, շինարարություն, առևտուր և ծառայություններ
- (4) տրանսպորտ և զբոսաշրջություն
- (5) արտաքին առևտուր
- (6) գյուղատնտեսություն, անտառաբուծություն և ձկնաբուծություն
- (7) պարենային ապահովություն
- (8) շրջակա միջավայր և էներգետիկա
- (9) այլ

3. Ի՞նչ եղանակով եք ստանում վիճակագրական տեղեկատվությունը.

Երրորդ հարցը նույնպես ունի 9 ենթակետ և ներառում է հետևյալ ենթակետերը՝ վիճակագրական տեղեկատվությունը ստանում է «փոստով», «էլեկտրոնային փոստով», «հեռախոսով», «www.armstat.am պաշտոնական կայքի միջոցով», « www.ArmStatBank.am կայքով», «մամուլի հաղորդագրություններով», «հրապարակումներով» և «այլ»: Ի դեպ, այլ տարբերակի տակ, օգտագործողներից շատերը նշել էին սոցիալական ցանցերը (մասնավորապես՝ ֆեյսբուքը): Հարկ է նշել, որ սույն հարցը լրացնելիս վիճակագրական տեղեկատվություն սպառողը (օգտագործողը) կարող է մեկից ավելի նշում կատարել:

Վիճակագրական տեղեկատվության ստացման եղանակները

(%)




- (1) փոստով
- (2) էլեկտրոնային փոստով
- (3) հեռախոսով
- (4) www.armstat.am պաշտոնական կայքով
- (5) www.ArmStatBank.am կայքով
- (6) մամուլի հաղորդագրություններ
- (7) հրապարակումներ
- (8) այլ

4. Արդյո՞ք բավարարում է վիճակագրական տեղեկատվության տարածման եղանակը.

Հարցն ունի 2 ենթակետ՝ «այո» և «ոչ»: Լրացնողներից 370-ը կամ 88.3%-ը նշել են «այո», «ոչ» պատասխանը նշել են 39-ը կամ 9.3%-ը, իսկ 10-ը կամ 2.4%-ը՝ պարզապես զերծ են մնացել նշելուց:

Վիճակագրական տեղեկատվության տարածման եղանակի բավարարումը

(%)




5. Ի՞նչ հաճախականությամբ եք օգտվում վիճակագրական տեղեկատվությունից.

Հարցն ունի 3 ենթակետ՝ վիճակագրական տեղեկատվությունից օգտվելու հաճախականությունը «առնվազն շաբաթը մեկ անգամ», «առնվազն ամիսը մեկ անգամ» և «ավելի հազվադեպ»: Այն նպատակ ունի պարզելու, թե վիճակագրական տեղեկատվությունից օգտվելու ինչպիսի հաճախականություն կա հանրության շրջանում:

Վիճակագրական տեղեկատվությունից օգտվելու հաճախականությունը

(%)




6. Ի՞նչ նպատակներով եք օգտագործում պաշտոնական վիճակագրությունը

Հարցն ունի 8 ենթակետ՝ «ընթացիկ զարգացումների վերլուծություն կարճաժամկետ որոշումների համար», «միտումների վերլուծություն երկարաժամկետ քաղաքականության ձևավորման համար», «էկոնոմետրիկ մոդելների կառուցման և կանխատեսումների համար», «հետազոտական նպատակների համար», «ընդհանուր տնտեսագիտական տեղեկատվության համար», «սոցիալական վերլուծության համար», «ժողովրդագրական վերլուծության համար» և «այլ»: Հարկ է նշել, որ սույն հարցում հնարավոր է արձանագրվի մեկից ավելի նշում:

Պաշտոնական վիճակագրության օգտագործման նպատակները

(%)




- (1) ընթացիկ զարգացումների վերլուծություն կարճաժամկետ որոշումների համար
- (2) միտումների վերլուծություն երկարաժամկետ քաղաքականության ձևավորման համար
- (3) էկոնոմետրիկ մոդելների կառուցման և կանխատեսման համար
- (4) հետազոտական նպատակների համար
- (5) ընդհանուր տնտեսագիտական տեղեկատվության համար
- (6) սոցիալական վերլուծության համար
- (7) ժողովրդագրական վերլուծության համար
- (8) այլ

7. Որքանով է բավարարում առկա պաշտոնական վիճակագրությունը Ձեր նախապատվային կարիքները.

Հարցն ունի 4 ենթակետ՝ ամբողջովին, հիմնականում, մասամբ ոչ և չի բավարարում: Հարցման արդյունքների վերլուծությունից պարզ է դարձել, որ պաշտոնական վիճակագրությունն «ամբողջովին» և «հիմնականում» բավարարում է հարցվողների 73.0%-ի նախապատվային կարիքները, իսկ «մասամբ ոչ» և «չի բավարարում»՝ 19.6%-ինը: Այս հարցին չեն պատասխանել լրացնողների 7.4%-ը:

Սպառողների նախապատվային կարիքների բավարարման աստիճանը պաշտոնական վիճակագրության նկատմամբ

(%)




■ (1) Ամբողջովին և հիմնականում ■ (2) Մասամբ ոչ և չի բավարարում ■ (3) Չեն պատասխանել

8. Արդյո՞ք Ձեզ բավարարում է պաշտոնական վիճակագրության մեթոդաբանությունը:

Հարցն ունի 4 ենթակետ՝ ամբողջովին, հիմնականում, մասամբ ոչ և չի բավարարում: Հարցման արդյունքների վերլուծությունից պարզ է դարձել, որ պաշտոնական վիճակագրության մեթոդաբանությանն «ամբողջովին» և «հիմնականում» ծանոթ են հարցվողների 73.7%-ը, իսկ «մասամբ ոչ» և «չի բավարարում» պատասխաններ նշել են հարցվողների 18.9%-ը: Հարցին չեն պատասխանել լրացնողների 7.4%-ը:

Վիճակագրական տեղեկատվություն պառոզների (օգտագործողների) բավարարվածության աստիճանը պաշտոնական վիճակագրության մեթոդաբանության նկատմամբ

(%)




■ (1) ամբողջովին և հիմնականում ■ (2) մասամբ ոչ և չի բավարարում ■ (3) չեն պատասխանել

9. Ինչպե՛ս եք գնահատում պաշտոնական վիճակագրության որակը.

Հարցն ունի 6 ենթակետ՝ շատ բարձր, բարձր, միջին, ցածր, շատ ցածր, կարծիք չկա: Պաշտոնական վիճակագրության որակը «շատ բարձր» և «բարձր» են գնահատում հարցվողների 78.9%-ը, իսկ «ցածր»՝ 2.7%-ը և «շատ ցածր»՝ 0.1%, «կարծիք չկա»՝ հարցվողների 6.1%-ը: Հարցին պատասխանել չեն տվել լրացնողների 12.2%-ը:

Վիճակագրական տեղեկատվություն սպառողների (օգտագործողների) կողմից պաշտոնական վիճակագրության որակի գնահատման աստիճանը




10. Ձեր կարիքները բավարարելու համար ԱՐՄՍՏԱՏ-ն ինչը՝ պետք է բարելավի

Հարցն ունի 4 ենթակետ՝ վիճակագրության «որակը», «յուրաժամանակությունը», «համապարփակությունը» և «այլ»: Կարիքները բավարարելու համար հարցվողների 20.1%-ը գտնում է, որ պետք է բավարարվի «որակը», «յուրաժամանակությունը»՝ 15.2%-ը, «համապարփակությունը»՝ 5.3%-ը, «այլ» նշել են 11.8%-ը, իսկ մնացած 47.6%-ը՝ չեն պատասխանել:

Վիճակագրական տեղեկատվություն պառոզների (օգտագործողների) կարիքների բավարարման համար անհրաժեշտ չափանիշները

(%)



■ (1) որակը ■ (2) յուրաժամանակությունը ■ (3) համապարփակությունը ■ (4) այլ ■ (5) չեն պատասխանել

11. Լրացուցիչ մեկնաբանություններ (ներառյալ այն ոլորտների մասին, որոնք Ձեր կարծիքով բարելավման կարիք ունեն).

Ստորև ներկայացվում են լրացված հարցաթերթերից վերցված հետաքրքիր մեկնաբանություններ, որոնք ենթակա են որոշակի ուսումնասիրման և գնահատման.

- ✓ ողջունելի է Արմատատի ֆեյսբուքյան էջի գոյությունը և դրանով արագ արձագանքման հնարավորությունը,
- ✓ ընդլայնել շրջակա միջավայրի հետ կապված տվյալների քանակը,
- ✓ ցանկալի է տվյալների բազաներում ցուցանիշների ավելացում,
- ✓ ստեղծել տվյալների փոխանակման մեկ միասնական հարթակ,
- ✓ ընդլայնել գյուղատնտեսության և շինարարության ոլորտների վերաբերյալ վիճակագրությունը,
- ✓ ընդլայնում համայնքների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը,
- ✓ ավելի հաճախակի հրապարակել աղքատությանը վերաբերող ցուցանիշները,
- ✓ ընդլայնել հետադարձ կապը,
- ✓ հասարակության լայն շերտերին հասկանալի լինելու համար պատրաստել վիճակագրության էությունը լուսաբանող նյութեր,
- ✓ բարելավել պաշտոնական կայքի փնտրման համակարգը,
- ✓ պաշտոնական կայքը թարմացնել, ձևաչափը նորացնել: